ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

"30" սեպտեմբերի 2024 թվական N 637-Հ

ք. Երևան

«ՊՐԱՅԴ ՍԻՍԹԵՄՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և 2-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 698-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 10-րդ ենթակետը՝

Հաշվի առնելով

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «ՊՐԱՅԴ ՍԻՍԹԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ՝ 00220237, գործունեության հասցե՝ քաղաք Երևան, Դավիթաշեն Ձոր-1 թաղամաս, տուն 82 և քաղաք Երևան, Ավան, Ծարավ Աղբյուրի փողոց, տուն 123/1, 0052) միջև 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-22/09» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածով ներկայացված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված

ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական» աշխատանքներ:

Համաձայն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ ընկերությունը պետք է մինչև 01.03.2024 թվականը հանձներ երկրորդ փուլի և մինչև 30.05.2024 թվականը՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք փաստացի չեն կատարվել:

Նախարարությունը, ղեկավարվելով 2022 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-22/09» գնման պայմանագրի 2.1.5-րդ կետի ա) և բ) ենթակետերով, և Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 2024 թվականի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծել է պայմանագիրը:

Հիմք ընդունելով, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, այն է՝ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1.«ՊՐԱՅԴ ՍԻՍԹԵՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում 2 /երկու/ տարի ժամկետով:

2. Սույն հրամանը հրապարակվելու հաջորդ օրը տրամադրել լիազորված մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը)՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

9/30/2024

X

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Signed by: GASPARYAN DAVIT 1407810154

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ